



Թուրքիայի Սվազի (Սեբաստիա) Գյուրուն քաղաքի Փընարյոնու թաղամասում գտնվող Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին վերականգնվելու է: Այս մասին որոշում են ընդունել թուրքական իշխանությունները՝ Թուրքիայի մշակույթի և զբոսաշրջության նախարարության ու Սվազի նահանգապետարանի նախաձեռնությամբ: Ermenihaber.am կայքի փոխանցմամբ՝ քաղաքապետ Մեհմեդ Ակթաշը նշել է, որ նախաձեռնությունն այդ շրջանում զբոսաշրջության զարգացման նպատակով է: 19-րդ դարում կառուցված հայկական եկեղեցին նախկինում որպես բանտ է օգտագործվել, ապա կինոթատրոն ու պահեստ: Վերականգնումից հետո այն կվերածվի քաղաքային թանգարանի: